ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

16 սեպտեմբերի 2025թ. **N 55-Ն**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 122-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի «Ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի և ժամանակի մասին տեղեկանքի ձևը սահմանելու մասին» N 122-Ն որոշման՝

1) հավելվածով սահմանված տեղեկանքում «ոչ ուշ, քան 14 օր» բառերը փոխարինել «ոչ ուշ, քան 12 օր» բառերով,

2) հավելվածով սահմանված տեղեկանքից հանել «Դիմողի անձին չվերաբերող դիմումը բավարարելու դեպքում՝ լիազոր մարմինը այդ մասին ծանուցում է azdarar.am համացանցային կայքի միջոցով:» նախադասությունը,

3) հավելվածով սահմանված տեղեկանքի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. ***այն անձը***, ով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմին ներկայացրել է համապատասխան ընտրական տեղամասի ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին դիմում, դիմումը չի մերժվել, սակայն իրեն չեն ընդգրկել համապատասխան ցուցակում.

(2-րդ կետը նշվում է Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ)»

4) հավելվածով սահմանված տեղեկանքի 3-րդ կետից հետո հաջորդ նախադասությունում՝ «լրացուցիչ ցուցակում ընդգրկելու» բառերը փոխարինել «լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**